




ԾԱԶԻԿ

ԿԱՆԱԼՆՑ ՅԱՏՈՒԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱՐԱԹԱԹԵՐԹ

ԴՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԾԱՏԱԿԱՆ

ԱՍՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ, ՆՈՐՈՇԹ

ՋԵՌԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ

ԿԱՆԱՅԻ ՀԱՐՑԵՐՈՒ ԵՒ ԱՇԽԱՏԱԶԻՆ ԻՐԵՐԱՒ



ԺԹ. ՏԱՐԻ

Բ. Շրջան, Թ/ւ 9



ՅՕԴՈՒԱԾՆԵՐ ՈՒՆԻՆ

ՏԻԿԻՆ ՍԱԹԵՆԻԿ ՏԷՐ ԲԱՐԹՈՂ
ՕՐԻՈՐԴ ԿՈՏԱՐԻՆԷ ՁԼՏՐԵԱՆ
ՕՐԻՈՐԴ ՏԻՐՈՒՀԻ ԿԻՆՊԼԵԿԵԱՆ
ՕՐԻՈՐԴ ՄԱԹԻՆ ԱՍՏՈՒՍԾԱՏՈՒՐ
ՕՐԻՈՐԴ ՔՐԵՍՏԻՆԷ ՄԷԼԻՔԵԱՆ



Գ/ն 40 փաթա

Տպագրութիւն ԾԱԶԻԿ. Կալաթա.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ

Տարեկան 50 դրուչ: Վեցամսեայ 25 դրուչ:

ԳՍԻԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան 54 դրուչ: Վեցամսեայ 27 դրուչ:

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆԻ ՀԱՄԱՐ

Տարեկան 12 ֆրանք:

Ծանուցման, բաժանորդագրութեան եւ թերթին վերաբերող ամէն կարգի գործառնութեանց համար դիմել մի՛ միայն՝

{زاغيك غزتهسى}

درعليهده غلامده قورشونلى خاندنه نومرو ۷

Շ Ա. Բ Ա. Թ Ա. Թ Ե Ր Թ «Շ Ա. Ղ Ի Կ»

Կ Պոլիս, Ղալաթիա, Դուրչունլու խան, թիւ 7

JOURNAL "DZAGHIK,"

Constantinople, Galata, Kourchoum Han, N° 7.



ՔԱԼՈՏԻՄԻՆԻ

ՔՈՒՄԸ

ԵՒ

ԲՈՒՏՈՒՆ

Բարիքի բժշկական կանա-
ռեն վկայեալ քիմիագետ Մ.
ՅԷԱՍԿԻ կողմէ պատրաստը-
ւած:

Քալոտրէմինի բուտտան եւ քուէմը միծ համբաւ կը վայելեն իրենց հաճելի յատկութիւններուն համար: Առանց վերապահութեան կարելի է ըսել թէ տաճը այս կարգի պատրաստութեանց ամենէն գերազանցեան: Քալոտրէմինի քուէմը ամէն տեսակ օճառէ աւելի լաւ կը մաքրէ մարմը: Երբ ամէն օր գործածուի գեղեցկութիւն, թարմութիւն եւ առողջութիւն կ'ընծայէ արտաքին երեւոյթին: Իսկ քալոտրէմինի բուտտան ալ այս գեղեցիկ արդիւնքները կը լրացնէ, ճերմկցնելով դէմքը բնական կերպով մը:

Այս աննման քուէմը եւ բուտտան կը ծախուի Բերա, Պօն Մառ-
շէ, Կալաթա, թիւնէլի փողոց Մ. Հիսարի, Սթանպօլ, Ելնի Ճամի,
Մ. Բլէանթէս Հաճօրուլօի եւ Մահմուտ Բաշա, Մ. Բօսթաքի Մի-
խայրիտիի վաճառատներէն:

ՇԱՀԱԿ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

(639) ԺԸ. ՏԱՐԻ — ԹԻԻ 9

2 ՆՈՅԵՄԲԵՐ 1906



ԱՏԱՆԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Զեռնադրուած 1906 Հոկտ. 29ին Ստոյ Մայր եկեղեցիին մեջ

Կիլիկիոյ Տ. Տ. ՍԱՀԱԿ Կաթողիկոսէն

ԻՆՉՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԶԿԱՅ ԳԻՒՂԵՐՈՒ ՄԷՋ



«Մարդկուրիւնը այսօր կրկնապէս յառազ գացած
եւ զարգացած պիտի ըլլար իր ընտանեկան կեան-
քի՞ն մեզ, եթէ գիտնար ու ճանչնար կի՞նը, ամօր
աբժամիքը, ամօր ունենալիք մեծ ազդեցութիւնը
«եւ մտնաւանդ իրաւունքը:»

ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Ծաղիկի առաջին թիւը օժտող, Գեր. Ս. հօր այս հմտալից
խօսքերն էին որ, ստիպեցին ինծի քանի մը տող գրել այս կարեւ-
որ խնդրոյն մասին:

Ամէնուն յայտնի ճշմարտութիւն մըն է թէ, ժողովուրդի մը
բարոյական և կրթական յառաջդիմութիւնը, անոր իգական սե-
ռին դաստիարակութենէն կախեալ է. իգական սեռը կրթել, ա-
պագայ սերունդը կրթել ըսել է, ու առանց անոր յառաջդիմու-
թիւն անկարելի է. անժխտելի է այս: Բայց, դժբաղդաբար մեր
մէջ տակաւին լաւ ըմբռնուած չէ այդ էական կէտը, ու տակաւին
պէտք եղածին պէս խնամք չի տարուիր մեր սեռի դաստիարակու-
թեան, որքան կը տարուի արական սեռին: Թէ՛ մայրաքաղաքի և
թէ՛ գիւղերու մէջ ունինք ըստ բաւականի վարժարաններ, մաս-
նաւոր ու թաղային, և մանկապարտէզներ ուր կը յաճախեն հա-
րիւրաւոր աշակերտներ, այլ ցաւ է մեզ ըսել որ ասոնց հազիւ
երորդ մասը իգական դաստիարակութեան յատկացեալ է. դըժ-
բաղդութիւն մը չէ՞ այս, ի՞նչ տարբերութիւն կայ երկու սեռե-
րուն մէջ, միթէ լաւ դաստիարակուած աղջիկ մը նուա՞զ օգտա-
կար կ'ըլլայ նոյնչափ խնամուած մաչնէ մը, ի՞նչ կ'արժէ հօր մը
չափ բան գիտնալը, քանի որ իր զաւակներուն և ո՛չ մէկ կերպով
օգտակար կրնայ ըլլալ, վասն զի իր կեանքը շուկան անցընելու
օտիպուած է. մէկ խօսքով, առանց իգականի միա՛յն արական
սեռի դաստիարակութիւնը աւագի վրայ չի նուած տան կը նմանի,
որ անհիմն է, և որ պզտիկ հոսանքէ մը իսկ կը քայքայուի: Զչե-
ղինք նիւթէն, ձգենք քաղաքները, գիւղը մոտենք մէյ մը, ու
քննե՛նք և հասկնանք անո՛ր ալ կրթական անախանձելի վի-
ճակը:

Բաղմամեայ փորձառութեամբ ուսումնասիրած եմ գիւղացի
աղայաց ներքին կարողութիւնը, բարոյական ու մտաւորական տե-
սակէտով: Գիւղերու մէջ պա՛կաս չեն ուսման ընդունակ ու ա-
պագայ խոստացող աղջիկներ, բայց աւա՞ղ որ տգէ՛տ մնայու դա-
տապարտուած են խեղճերը, վասն զի գիւղի, դպրոցի հոգատար

մարմինը բնա՛ւ կարեւորութիւն չի տար աղջկանց կրթութեան . անթիւ գումարներ կը ծախսէ նաւ աւէն տարի , և նոր ու բանիմաց ուսուցիչներով դպրոցը պայծառացնելու կ'աշխատի , այլ . . . արական մասը միայն , ու կ'ըսէ «դպրոցնիս չէն է» . դէթ անգամ մը ուշադրութիւն չի դարձներ աղջկանց կողմին , տրուած դաստիարակութիւնն ալ աւելորդ հաճարելով կարծես , այլ կը բաւականանայ 200է աւելի մատաղ միտքեր 2-3 վարժուհիներու յանձնելով , որոնք կա՛մայ ակամայ , կը ստիպուին կատարել այդ պաշտօնը , ու կը լրացնեն իրենց տարին առանց փոքր ինչ արդիւնքի , կամ լաւ եւս է ըսել , քանի մը տասնեակ ալ աւելցնելով անուս հասարակութեան թուոյն վրայ : Եթէ կանխաւ քչիկ մը հոգ տարուած ըլլար իգական դաստիարակութեան , ու վատնուած պատկառելի գումարներուն գոնէ երրորդ մասը այդ նպատակաւ գործածուէր , ո՛չ մէկ գիւղ զուրկ կ'ըլլար այսօր ուսումնական ու զարգացած մայրերէ : Աւէն գիւղ , առանց բացառութեան , ունի ծաղկոցներ ? անձամբ այցելած եմ անոնց ո՛չ մի քանին : Աստուած իմ . երեւակայեցէք ընդարձակ սրահ մը , որու գաղջ ու ապականեալ մթնոլորտին մէջ , խառն ի խուռն խճուղուած են հազարաւոր մանչ և աղջիկ մանկոտներ , բոլորովին անխնամ , ու այս ամէնը , այսպիսի քաղմութիւնը միայն եւ միայն մէկ մանկավարժի մը յանձնուած է . ի՞նչու այսպիսի անհոգութիւն , ի՞նչու թողունք որ խամրին այսպէս մեր դեռափիթիթ ծաղիկները , քանի որ անոնք պիտի ըլլան ապագային մեր գրասեղանները զարգարողը . աւելի կատարեալ չըլլա՛ր երբ հոգատար մարմինը փոխանակ իր ուժը մեծերուն վրայ կեդրոնացնելու , և անհատնում գումարներ զուր տեղը ջուրը նետելու , նախ և առաջ հոգ տանի ծաղկոցի բարեկարգութեան , ձեռնհաս մանկավարժներու յանձնելով դայն . և այս՝ ինչպէս յայտնի է , մեծ գումարներու չի կարօտիր . առանց այդ բարեօրժան շրջանաւարտներէ ուսմունք յուսալ , անմշակ պարէտզէ մը արդիւնք ակնկալել է պարզապէս :

Ուշագրաւ պարագայ մըն է նաեւ ծնողաց անտարբերութիւնը հանդէպ դպրոցի ու կրթութեան , և որ ամէնէն մեծ խոչնդոտն եղած է կրթական յառաջդիմութեան : Գիւղացի մայրիկը , դպրոցը կը նկատէ իբր այնպիսի վայր մը ուր կը յաճախեն մանուկներ , իրենց ծնողաց քիչ մը հանգիստ պատճառելու նպատակաւ :

Անիկա չաբաթը հազիւ 1-2 անգամ , ա՛յն ալ հազարումէկ խոստումներով , դպրոց կը շրկէ իր զաւակը , չէ թէ անոր քիչ շատ ուսում սովորելու փափաքելուն , այլ սո՛սկ իր հանգստութեան և գործին առատութեան համար . մտածե՛նք մէյ մը , ի՞նչ պիտի ըլլայ այսպիսի տղայ մը , ոչինչ :

Տղայ մը կամ աղջիկ մը, պէտք է ընտանեկան յարկին մէջ ստացած ըլլայ իր նախնական դաստիարակութիւնը, զոր պիտի չարունակէ ապա դպրոցին մէջ, լսելով ու ուսանելով ա՛յն ամէն բարոյական դասերը որոնց կ'անգիտանայ տակաւին, բայց ընդհակառակը հոս զիւղերու մէջ, տղան իր անուս ծնողաց հետ չփուլելով, կը հագնի բնդհուպ անոնց յոռի դաստիարակութիւնը, կը ստանայ ապականեալ բարք մը, ու կը յանձնուի դաստիարակին, որ չարաչար կ'աշխատի սովրեցնել տղուն՝ ինչ որ չգիտեր, և մոռցընել՝ ինչ որ գիտէ. այլ իզո՛ւր, տղան ի՛նչ որ էր նո՛յնը կը մնայ դարձեալ, ու այդ բարոյական դասերը կը ջնջուին անմիջապէս իր ընտանեաց մէջ, որովհետեւ մինչդեռ դասատուն կ'աշխատի մանկան մօրքին մէջ զետեղել բարոյականի մաքուր գաղափարը, ծնողը անգիտակցաբար կը սրբեն զայն իրենց յոռի բարոյականով ու թոյլ վարմունքով. այսպէս տղան կ'աճի, մի առ մի ընդօրինակելով իր ծնողաց վատթար վարմունքը, ու կ'ըլլայ իր հօր կամ մօր նման կատարեալ *sqh's* մը:

Ի՞նչ է այս ամէնուն պատճառը, եթէ ոչ իզական դաստիարակութեան կանխաւ հոգ չի տարուիլ: Զէ՞ մի որ գիտուն ու կրթեալ մօր ծոցէն միայն կը բղխին գիտուն զաւակներ:

Գիւղի մէջ, անուս մայրը ամօթ կը սեպէ իր 12 տարեկանէն վեր աղջիկը դպրոց զրկել, առարկելով թէ մեծցած է այլ ևս, և պէտք է տնական գործերու ալ հետամուտ ըլլայ, իսկ երբ աղջիկը, հակառակ իր մօր կամքին, չարունակէ իր դպրոցական ընթացքը, նորէն մայրն է դարձեալ որ կը պօռայ իր աղջկան երեսին. «Փիլիսոփայ պիտի ըլլաս, վաղը հարս կ'ըլլաս, սօփա՞ պիտի ընեմ քեզ...»: Եւ զձ աղջիկը կամայ ակամայ խակ գլխով կը հրաժարի դպրոցէն, ու տարիներու չրջանին մէջ գիտցած քչիկ մը «ա, բ, գ» ալ մոռնալով, կ'ըլլայ իր մօր պէս տգէտ մը, և քիչ ժամանակէն մայր կ'ըլլայ քանի մը տգէտներու. և ի՞նչպէս չըլլայ, քանի որ կարգալ չի գիտեր, ուսման համը առած չէ. ի՞նչպէս պիտի կարենայ դարգացեալ անհատներ շնորհել մարդկութեան, անկախելի է այդ և յուսալն ալ անխելքութիւն:

Ուրեմն ամէնէն ընտիր և կարճ միջոցն է ուշադրութիւն դարձնել ծաղկոցներուն և ըստ բուսականի բարւոքել զանոնք, հոգ տանիլ աղջկանց կրթութեան, որով միայն իրաւունք պիտի ունենանք յուսալ ապագայէն կրթեալ և խելացի աշակերտուհիներ և մայրութեան նոյն իրական պաշտօնին արժանի, դարգացեալ ու հմուտ օրիորդներ:

Բագար-Միզա-գիւղ

ԿԱՏԱՐԻՆԵ ՉԼՏՐԵԱՆ

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՊԵՏՔ Է ԱՄՈՒՍՆԱՆԱԼ



Ա. Բ. Ա. Զ. Ի. Ն. Մ. Ա. Ս.



ԿԻՆ ԱՌՆԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

ՊԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐՊ



ԴԺՈՂՔԸ



Հեղինակ ԲՕԼ ՄԱՆԹԻԿԱՑՅԱ

Մարդաբանության ուսուցիչ եւ անդամ Խաչկոյ ծերակոյցին



Երկար լռութենէ մը յետոյ, երկչոտ ու վարանոտ, ոճիր մը գործելու վախով համակուած կարծես, ըսաւ կինը.

— Բան մը չե՞ս ուզեր:

Այրը տեղէն վեր ցատկեց, այդ խօսքէն մարակուած, և կնոջ կողմը դարձաւ, արագօրէն խածնելով շրթունքները, յանկարծաւ կան ու անդիմադրելի սիրտ խառնուեցէ մը բռնուած գոգցես:

— Ո՛չ, բան մը չեմ ուզեր, պատասխանեց:

Այդ «ոչ»ը այնքան բարկութեամբ ու անարդանքով արտասանուեցաւ որ հասկցողին համար ապտակի համարժէք էր:

Իր նայուածքը երկարօրէն սեւեռեց կնոջը վրայ. ատելութեամբ, խղճի խայթով ու նողկանքով աւելցուած նայուածք մը: Կարծես իր կեանքի ընկերուհիին բոլոր տգեղութիւնները աչքէ կ'անցնէր, իրր թէ մինչեւ այն տոհմն աչքին զարկած չըլլար այդ ամէնը: Դէմքին խորշամները, ճերմկած մազերը, կոշիկ, ձեռք և լաւ լանջքը, ծթրած խոզապուխտի նմանող բաղուկները, և մատանիներն ու գոհարեղէնները՝ որոնց փայլը հակադրութիւն մը կը ձեւացնէր այդ լիակաւ ու անփայլ մահի հետ. բոլոր այդ տգեղութիւնները, ճաշակի բոլոր այդ գուեհիկ պակասները նախատինք մըն էին այդ երիտասարդ, կորովի ու գեղեցիկ մարդուն համար, որ յանցաւոր էր իր երիտասարդութիւնն ու առնականութիւնը ծախած ըլլալուն համար խեղճ կնոջ մը, մինչ այս վերջինը կարծած էր թէ պէտք կ'ընար սիրել և սիրուիլ այդ տարիքին մէջ իսկ:

Ինչ մը առաջ այր և կին ծով մտած էին արեգական ճառագայթները վայելելով . բայց ո՛չ արեւը և ո՛չ ալ ծովը չէին կրցած հրճուանք ազդել այդ երկու մեղսակիցներուն , որոնք բղջախոհութիւնը փոխանակած էին ոսկիով , և նուիրական սիրոյն տեղ դրած էին աթոթալից պոռնկութիւն մը , միսը ծախու հանելով պանքտոմոններու փոխարէն :

* * *

Կինը անցուցած էր երիտասարդութեան երկրորդ շրջանը , մինչ այրը երիտասարդ էր տակաւին :

Կը հանուէր կինը : Արդէն իսկ անկողին մտած , այրը անձկութեամբ կը հետեւէր աստիճանական մերկացման այդ մարմնին , երբեմն այնքան ճկուն , այնքան գեղեցիկ , այնքան խռովիչ , մինչ այսօր համագրաւիչ ճարպին մէջ թաղուած էր :

Այրը կ'ուզէր վերմակներուն տակ ծածկել գլուխը և այդպէս ալ կ'ընէր , բայց գէշ հետաքրքրութիւն մը կը մզէր դանի վերմակէն դուրս հանելու գլուխը և գիտելու :

Յաճախ կինը հայելին մէջ տեսած էր իր մարմնոյն աղիսալի քայքայումը . այդ պատճառաւ կ'ուզէր առանձին եղած ատեն հանուել . բայց այս անգամ , հակառակ ամէն ճիգերուն , ստիպուած էր ամուսնոյն աչքին տակ հանուել :

Իր մարմնոյն ամէնէն խաթարուած մասերը կը ջանար քողարկել , և պշտասիրութեան յեալին մնացորդ մը կը մզէր զինքը գոց պահելու ուսերը , կնոջական մարմնոյն այդ *Ultimum Moriens* : Բայց ինքզինքին վրայ անվստահ , իրեն ուղղուած չեչտակի նայուածքներէն վախցած , մէկ անգամէն վար ձգեց չապիւրը , ոտքերուն տակ , և իր գեղեցկութեան քայքայումը ի յայտ եկաւ յեղակարծօրէն , անողորբօրէն , առանց կարեկցելու թէ՛ իրեն և թէ՛ ամուսնոյն :

Կինը ճիշ մը արձակեց և մերկութիւնը ծածկելու համար՝ անկողին մտաւ : Ամուսինը , եսասէր , անկարեկից , մոռնալով այդ մարմնոյն ընծայած բոլոր հեշտանքները , ատենօք այնքան գեղեցիկ ու երիտասարդութեամբ շողշողուն , իր կարգին ճիշ մը արձակեց և ըսաւ կնոջ .

— Որոշեալ տարիքի մը մէջ , կարծեմ թէ քիչ մը աւելի աթոթղածութիւն ունենալու է կին մը :

Այդ իրիկունէն և այդ ժամէն ի վեր թշնամացան այր և կին , ալ եւս իրարու չղթայուած երկու թիապարտներ էին անոնք :

* * *

Աւելի ընկողմանած քան թէ բազմած հասարանի մը վրայ, մեծ ու փոքր բարձերու կրթնած սիկառէթ մը կը ծխէր, ծունգերուն վրայ ունենալով ֆրանսերէն վէպ մը, որ շատ զբօսեցուցիչ ըլլալ չէր թուեր, քանի որ կը յօրանջէր այդ պահուն:

Յօրանջումը ընդհատուեցաւ սրահին դրան յեղակարծ բացուելով: Միայն ամուսինն էր որ այդ կերպով ներս կը մտնէր, և այս անգամ բարկացած ալ էր:

Գլխարկը գլուխը և գաւազանը ձեռքին մէջ ներս մտաւ ամուսինը, իբր թէ դուրս ելլելու կամ տուն դառնալու վրայ ըլլար: Այս վերջին պարագային մէջ կը գտնուէր: Պտոյտէ մը դարձին, նախասենեակին մէջ իրեն յանձնած էին մեծադիր պահարանով նամակ մը: Նորթիկին հաշուեցուցակն էր, երրորդը կամ չորրորդը, քանի մը ամիսէ ի վեր: Ամբողջական գումարը սովորականէն աւելի բարձր էր:

Իր կնոջ հետ բանավէճ մը ունենալու համար, ձեռքը բռնած էր հաշուեցուցակը:

— Էհ, տիկին, երբ վերջը պիտի դայ այս հաշուեցուցակներուն:

Տիկինը չպատասխանեց և չարունակեց ծխել, բայց թեթեւ կարմրութիւն մը պատեց դէմքը:

— Կ'երեւայ թէ տիկինը միլիոնատէր կը կարծէ ինքզինքը... երրորդ անգամն է որ հաշուեցուցակ մը կը վճարեմ չորս ամիսէ ի վեր: Ի՞նչ պիտի ըլլայ այս խաղին վերջը:

Մարած սիկառէթը ճաքոնական մոխրամանի մը մէջ նետելով, տիկինը ամբողջ մարմնով երժկտաց հեշտագին ու դիպուածաւ ցուցադրեց պարիկի ոտք մը և արձանային սրունգ մը: Արդէն մէկէ աւելի անգամներ սաստիկ փոթորիկներու առաջը առած էր սիրոյ նուիրական պատկերներու այդ ցուցադրութիւնը: Սակայն, այդ օրը, ոտքի մը և սրունգի մը տեսքը չյաջողեցաւ զինաթափ ընել ամուսինը՝ որ բազմոցի մը վրայ նետած էր գաւազանը, առանց հանելու գլխարկը, իր նախատական խօսքերուն սաստկութիւնը և սպառնալիքներուն ուժգնութիւնը չեշտելու համար:

Յաջորդաբար խեղճ թուղթը կը ճմուլկէր ու կը պարզէր կատաղօրէն:

— Չպիտի վճարեմ այս հաշուեցուցակը, ուզածին պէս թո՛ղ կարգադրէ: Գոհարեղէններ նուիրած եմ. թո՛ղ գրաւի դնէ և հաշիւը մաքրէ: Այլ ևս պիտի սորվի թէ ի՞նչ կը նշանակէ իշխանութիւն պէս կեանք վարել ուրիշին դրամովը...

Փոքրիկ ոտքն ու սրունգը փէշերուն տակ մտած էին նորէն, իրենց պարտութեան վրայ ամօթապարտ, իսկ կինը որոշեց բերանը բանալ վերջապէս:

— Սակայն չէք կրնար բանադատել զիս որ անլայելուչ կերպով ներկայանամ աշխարհիկ ընկերութեան մէջ :

— Բայց աշխարհիկ ընկերութիւնը ո՞րն է . գնչուներու ընկերութիւն մըն է ան : Քենէ աւելի ջոջ շատ մը կիներ կէսն իսկ չեն ծախսեր քու մտած գումարիդ : Տեղեկութիւն առած եմ այդ մասին և շատ լաւ գիտեմ :

— Այո՛, միֆիդ ըսած ըլլալու է, սա միֆիդ, որուն շատ աւելի մեծագումար հաշուեցուցակները կը վճարես, բաղդատմամբ կնոջդ հաշուեցուցակներուն :

Մինչեւ այն ատեն կինը բնաւ անունը չէր տուած այդ պարուհիին, և ամուսինը այնպէս կը կարծէր թէ ո՛չ ոք տեղեկութիւն ունէր իր սիրային յարաբերութենէն :

Ամուսինը կարծեցաւ մինչեւ մազերուն արմատը, պոստեց յօնքը, օձէ խայթուածի մը պէս ցնցուեցաւ և խօսակցութիւնը բիրտ ըլլալու աստիճան դառն չեղաւ մը առաւ :

— Ա՛հ, ամէն մեղքիս վրայ նախանձոտ ու լիրբ ալ ես : Այնպէս կը կարծեմ որ երբ կին մը առանց դրամօժիտի ամուսնացած է, պարտի քիչ մը աւելի համեոտ ու խնայասէր ըլլալ :

— Լա՛ւ, շա՛տ լաւ պարո՛ն : Ի՞մ երիտասարդութիւնս բերի իբր դրամօժիտ, գեղեցկութիւնս ալ ուրիշ դրամօժիտ մը : Այո՛, պարոն լիրբ, լաւ դրամօժիտ մըն էր բերածս, ճամարիտ հարստութիւն մը, որ Թուրինոյի պանքային սնանկութեան մէջ չէր կրնար փճանալ : Ի՛նչ անստույգութիւն էր ըրածս : Պարոնը ի՛նչ բերաւ իր հետ : Ճաղատ գլուխ մը, կեղծ տկուսներ, մոլութենէն քայքայուած մարմին մը... Իրա՛ւ որ հօրենական աղւոր ժառանգութիւն մը :

— Ա՛հ, դրամօժիտ մը ունի եղեր : Բնաւ տեսած չունիմ ասանկ բան մը :

— Իբր հարստութիւն կը տեսնեմ այն ոսկին, որով լեցուցած են ձեր ակռաները : Ծախեցէք այդ ոսկին և Նորթիկիս հաշուեցուցակը վճարեցէք :

Հաշուեցուցակը կնոջ սուքերուն տակ ինկաւ, և ամուսինը դուրս ելաւ, սրահին դռները ուժգնակի դոցելով, այնպէս որ բոլոր ճարճական գեղօրները իրարու զարնուեցան, մանր երկաթեղէնի ձայն հանելով :

Ու կինը ուրիշ սիկաուէթ մը վառելով, իր հոգւոյն բովանդակ թափովը երդուընցաւ վրէժխնդրութիւն մը գտնելու, արժանի այն նախադէպին՝ որուն առարկայ եղած էր :

Իր փոքր սրահին մէջ առանձին փղոսկրով և երկնոստով երփնադրուազ կապերտակալի մը առջեւ նստած, նէ կը գրէր արագօրէն. կը ծիծաղէր այնպիսի մէկու մը պէս որ նամակ կը գրէ սիրուած էակի մը, գորովալից խօսքերու ալիքի մը մէջ խեղդելով չարածձի խօսք մը: Ու փոքր սրահին մէջ կը լսուէր թուղթին վրայ սահող գրչին մեղմ ու համաչափ ճոխչը:

Միտքը բոլորովին գրաւուած անով որուն նամակ կը գրէր, չզգաց որ մէկը դրան վարագոյրը բանալով ներս մտած ու իր առջեւ կեցած էր:

Այդ մէկը չէր այն անձը՝ որուն նամակ կ'ուղղէր, քանի որ երբ իր աղւոր գլուխը պահ մը վեր առաւ, աւելի սիրուն և հաճելի ածական մը փնտռելու և միւս գրածներուն վրայ աւելցնելու համար, իր առջեւ տեսաւ ամուսինը, մինչ կը կարծէր թէ դուրս ելած էր ան:

Զարմանքի ճիչ մը արձակեց, և անգիտակցաբար, ձեռքը տարածեց թուղթին վրայ, որ իր գրով ծածկուած էր:

— Ահ, դուն ես եղեր... վախցուցի՛ր զիս:

— Ուրիշ անգամ իմաց կուտամ ներս մտած ատենս:

Երիկը առանց բարկանալու, կատարեալ հանդարտութեամբ արտաւանդ այդ խօսքը, բայց իր բերանը տեւակսն հեզնութեամբ մը կը ժպտէր: Տակաւ այդ ժպիտը ճշմարիտ ծիծաղի մը փոխուեցաւ. գլուխը վերէն վար և վարէն վեր կը ցնցուէր, և համաչափութիւն կը դնէր ծիծաղին մէջ:

(Շարունակելի)

ՄԱԹԻՆՏ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

«ԾԱՂԻԿ»Ի Բ. ՏԱՐԵՇՐԶԱՆԸ

ԳԱԽԱՌԻ ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Ինչպէս յայտարարած ենք արդէն, Ծաղիկ իր երկրորդ տարեւորջանը թեւակոխած է. հետեւաբար կը խնդրենք գաւառի մեր ազնիւ բաժանորդներէն որ հաճին փութացնել մեզ իրենց բաժնեգրները, նկատողութեան առնելով մեր Կանխիկի զբուծիւնը:

ՆՈՐԱԶԵՒՈՒԹԵԱՆՑ ԲԱԺԻՆԸ

ԳԼԽԱՐԿՆԵՐԸ

Պարզ գլխարկներ. — Կէս արդուզարդի գլխարկներ.
— Ճոխ գլխարկներ :

Ներուպական Նոյեմբերի սկիզբը գրեթէ ազդարար նշան մըն է ձմեռնային նորաձեւութեանց կիրարկումին, այնպէս որ ա՛լ ոչ մէկ գլխու վրայ կը տեսնուին ամառնային, մանաւա՛նդ բաց գոյնով յարդէ գլխարկները, Ամէն կողմէ մեծ պատրաստակամութիւն կ'երեւայ ընդունելու թաղիքէ, թաւիչէ և մետաքսեղէնէ շինուած գլխարկները : Բոլոր նորաձեւութեանց վաճառատուններուն ցուցափեղկերը չնորհալի և հոծ ցուցադրութիւն մը կը պարզեն մեր աչքերուն :

Իբր պարզ գլխարկ, զոր կարելի ըլլայ գործածել այս տարի կարճ չրջազգեստի մը հետ, ամառուան Բանաւնա կոչուած ձեւն է. այլ ևս իրենց նորոյթը կորսնցուցին Քանօթիէն և Մարիզը : Վերջացող եղանակին մէջ Բանաւնան այնքան մեծ յաջողութիւն մը գտաւ որ՝ դայն կ'ուզեն ներկայ եղանակին մէջն ալ ապրեցնել : Այսպէս, կակուղ թաղիքներ կը նախընտրեն, զոր ուզած կողմերուն ծռմուտիկով դէմքերուն կը վայլեցնեն, զոր օրինակ, ճակատը վար, ետին բարձրացած և մէկ քովէն վեր : Նւ իբր միակ զարդարանք վրան կը դնեն կտոր մը թաւիչ կամ քիչ մը ժապասւէն և երբեմն քիւլմֆուքս մըն ալ :

Երկայն ձգուած չղարշներն ալ սիրուն հմայք մը կուտան այս Բանաւնային որ Քանօթիէներուն տեղը բռնեց այս տարի և որ առհասարակ ամէն դէմքի երթալու առաւելութիւնը ունի :

* * *

Գալով կէս-արդուզարդի, ասոր հաճար ալ թօքը ունինք, որ այս տարի կ'երեւայ թէ մեծ յաղթանակ մը պիտի վարէ նորաձեւութեան աշխարհին մէջ : Շատ տեսակ թօթեր կան. կարծր թաղիքէ, մուշտակէ, ասուիէ, թաւիչէ, բլիւշէ, թաֆթայէ ևն. : Ասուիէ, շիֆօնէ եղած թօթերը շատ վայելուչ և սիրուն ըլլալով արդէն ընդունելութիւն մը գտած են հիմակուընէ :

Մուշտակէ թօթերը կըրը և կամ մէջտեղը փոսացած, ինչպէս են արանց գլխարկները, և կը զարդարուին ծաղիկով մը,

օրինակի համար, խոշոր վարդ մը, մեծ տանձիա մը, կամ քամէ-
լիայի փունջ մը: Շինչիլլայէ թո՛ք մը սքանչելի է երբ արծաթա-
գոյն վարդով մը կը դարդարուի, և կամ շուքոռէ թո՛ք մը վիռլէթի
փունջով մը:

Այս տարուան նորածնութեան մէջ սիրուն կ'երեւան նաև տե-
րեւներէ ձեւացած թօհերը:

Անցեալ օր խիստ փոքր կնոջ մը վրայ, որ ամէն տարի Բա-
րիզ կ'այցելէ, տեսայ այս ձեւով գլխարկ մը. բոլորովին դեղնած
տերեւներով կաղմուած էր ան, աշնան հողմնաւար տերեւներուն
պէս, որոնց այլազան երանգներուն վրայ կը սքանչանանք: Մէկ
քովը կը գրաւէր խոշոր ֆանիէղի վարդ մը, թխադոյն ու սեւ
ցոլքերով ճոխացած, որ տերեւներուն մէջը կը թաղուէր: Եւ բոլոր
տերեւներէն մէյմէկ անուշ գոյն ցայտելով ամբողջ գլխարկին գիւ-
թիչ հրապոյր մը կուտային, որ արդարեւ այնքան ինքնատիպ
կ'ընծայէր զայն ստեղծող ճաշակը:

Այս թօհերուն կարգին մէջ ունինք նաև փես կոչուած ձեւերը,
որոնք մեծ նմանութիւն մը ունին պարսկական գզակներուն հետ,
ասոնք կը յառաջանան ճակատդ ի վար և կը զարդարուն երկայն
դարձած եկրէթով մը:

Քիչը կոչուած ձեւերն ալ յաջողութեան մէջ են. ասոնք կը
նմանին գլխիվայր դարձած զանգակի մը, որուն եղբրը կ'իյնան
մազին վրայ. ետեւէն պառնէք մը կը վերցնէ շիրենք և մէկ քովէն
ծաղիկ մը կամ ժապաւէնի հանգոյց մը կը դրուի: Այս գլխարկ-
ները ընդհանրապէս թաղիքէ կ'ըլլան, և բուն մօտէջը զարդար-
ուած է աքաղաղի փետուրներով, որոնք մէկ քովէն ականջին
վրայ կ'իյնան: Աքաղաղի փետուրները շատ կը գործածուին այս
տարի:

* * *


Եւ սակայն, ճոխ արդուղարդի վերապահուած գլխարկները
միշտ խոշորներն են, մեծ մեծ քաբըլիներ, զարդարուած օրնիշ-
ներով: Կոճկնապօռու, Մառի Անթուանէթ, Լուի Ժ.Չ. միշտ նա-
խընտրելի են: Նոյնպէս վայելչաձեւ են պեռէ և թաւչեզը գլխարկ-
ները, երկգոյն գլխարկները, ինչպէս, օրինակի համար, սեւ թաւի-
չէ գլխարկ մը և տալը վարդագոյն: Կը տեսնուին նաև Ասիէթ
կոչուող ձեւերը, բոլորովին տափակ և զարդարուած ծաղկէպսա-
կով մը և կամ ողկոյզներով:

Տեսնե՛նք թէ ի՞նչ պիտի մտածուի թատրոնի գլխարկներուն
համար:

ՏԻՐՈՒՆԻ ԿԻՒՂՔԵՆԿԱՆ



ԱՐՏԸ



ՏԻԿ. ՄԱՐԻ ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻՆ

Աթիսպպաս

Օ՛հ հրաժեշտի վայրկեանը. երկու այրող ձեռքերու փարումը, զսպուած՝ պոռթկալու պատրաստ հեծկլտուքը, բռնազբօսիկ ժպիտները. իրարմէ խուսափիլ ուզող ականարկները, երկարող բաժանումի տաժանքը, էութիւնդ ցնցող վերջին համոյրը... : Տարիներէ վերջ մինչեւ այժմ այդ վայրկեանը յիշելուս կը համակուիմ այդ բոլոր զգացումներով :

Ճակատագրային այս բաժանումը, եսասիրական մտածումներու պարտուիլը տեղի կուտայ գերմարդկային բարոյական ճիգերու որոնցմով մտածող մարդը կը պարծի ու զգացող մարդը կ'ընկճի ու կը տառապի :

Սիրելիդ գրկէդ խող յախշտակող շողենաւի անիւներն հազիւ կը սկսին թաւալիլ սպիտակ ֆշոցով և արդէն կը զգաս կարօտի պաքներու միտիլը սրտիդ մէջ. ի դուր ականարկդ յառած կը մնայ ջուրերու վրայ սահող այդ անողոք շողենաւին, կը հետեւիս անոր մինչ սեւ կէտ մը դառնայն ու աներեւութանալը, այն ատեն փղձա կումներու սոսկալին կ'ունենաս. ապահով՝ որ մեկնող սիրելիդ չկրնար տեսնել քեզ, կուլաս կուլաս անուշ լացով մը. կուլաս, կուլաս մինչև որ սիրող թեթեւի, մինչև որ պարտաւորութեան ձայն մը սթափէ քեզ ու դարձեալ կը ջանաս ծածկել, մոխրի տակ ծածկել կարօտի կայծերը, ինքնամիտի վայրկեաններուդ, վերացումի պահերուդ գրգռելու այդ անուշ յիշատակները որ գոյու. թիւնդ իսկ են : Սրտի այս ճմլումները, կեանքի այս դառնութիւնները ունին սակայն չգիտեմ ինչ մը որ գոգցես կեանքի արժէքը բարձրացնեն :

Բաժանումը խորապէս կը զգացնէ մեզ համակող սէրերը, անոնց արժէքը մեր կեանքի համար...

Կարօտախտը... սոսկալի հիւանդութիւն մը որ անտես կ'առնէ կեանքի միւս երջանիկ պայմանները : Սիրելի մը կամ ծննդավայրի կարօտը կը հալեցնէ, կը մաչէ, կը հիւանդացնէ, մտասեւեռ, անձկագին բաղձանքներու կատարումը կը ջնջուի իր աչքին : Նմանօրինակ զգայնութիւնը փափաքելի չգիտի ըլլալ ոչ մէկի համար : Բարոյական վերին արիութիւնն հարկ անհրաժեշտ է կեանքի ամէն պարագաներու համար. այս տները կը մտածեմ, այս ամենուն վրայ կը խորհիմ, այլ ամենէն լուրջ խորհող անութիւններս համակերպութեան արտաքին երեւոյթով կ'ընկճին :

Ո՛հ քոյր ի՛ր, ո՛հ Զմիւռնիա, կարօտախտի մագիլներու մէջ պրկուած զոհն եմ... :

ՊՐԱՆԱ

ՍԱԹԵՆԻԿ ՏԵՐ ԲԱՐԹՈՂ



ԱՅՆԹԱՊԻ ԿԻՆԵՐԸ

Այս ամիսներուն Այնթապի մէջ եռուզեռում մը կայ, ամէն տուն գործ, ձաւար, ռուփենի (շիրէ), բուրդ եւն. տիկիներ երգիքներու վրայ, հրապարակներու մէջ, այգիներու մէջ, տուներու մէջ, միշտ գործի վրայ, միշտ զբաղած: Այնթապցի տանտիկիներ տնական կ'որեւոր գործերու համար յատուկ շրջան մը ունի, որ ատեն յոյս քաղաքացի տիկնայք կը զբաղին ձմեռնային պատրաստութիւններով. այս գործի շրջանը կը սկսի գրեթէ Յուլիսէն մինչեւ Նոյեմբեր, կամ ոմանց համար մինչեւ Դեկտեմբեր: Տանտիկիներ անանուխով կը սկսի ձմրան պարէնի պատրաստութեան. ամառնամուտին անանուխը չորցնելով կը փշրէ ու տալրակիլով մը կը կախէ մառանը. բարեկեցիկ ընտանիքներ որոնց ցորենը առջի ձմեռուանէ պատրաստ է, ձաւարի (պուլզուր) գործին կը սկսին Յուլիս ամսուն, մանաւանդ Վարդապետի չարաթը կարծես այս շրջանին սկզբնաւորութեան սահմանն է. քաղաքին մէջ մասնաւոր ջրարրի ընդարձակ հրապարակներ կան, ուր կը պատրաստեն ձաւարը, այս վայրերէն մին կը գտնուի քաղաքին չիւս. Արեւմտեան կողմը Այնդէպէն անուանեալ՝ որոյ մէջէն կ'անցնի առուակ մը. հոն կան երկու աւազաններ սալայտակառած. հոն է Տէյիպը որ է մասնաւորապէս գետնէն մէկուկէս երկու կանգուն բարձրութեամբ և երկու կանգուն շառաւիղով տափարակ շէնք մը վրան ծեփուած, ճիշդ կեդրոնը տախտակէ հաստ սիւն մը ուղղաձիգ տնկուած է և այդ սիւնին մէջ մտած է ծայրը գերանի մը որ հորիզոնական ուղղութեամբ երկնցած է և որ հաստ մեծ, սեւ և կոոր մէջտեղը ծակ երկանաքարի մը մէջէն անցած է. այս հորիզոնական ուղղութեամբ երկնցող գերանին միւս ծայրը ազատ ձգուած է՝ որուն կը լծէ Տէյիպնի մարդը ձին՝ որ դարձնէ երկանաքարը, և որով ծեծուի այդ ծեփուած տեղին վրայ դիզուած ձաւարը:

Այնլէպէնը մանաւանդ այս ամիսներուն կարծես տօնավաճառի վայր մըն է. մէկ օրուան մէջ 10—20 ընտանիքներ իջած են ձաւարի գործին. ջուրին մէջ լուալու տեղ չի կայ, իրարու կը սպասեն. իրենց կառները փռելու համար վիճաքանութիւնները կը տաքնան. առէին ցորեն լուացողներ, անդին հիփուած հատիկը զամբիւղներով փռելու կրողներ, հոս ծեծուած ձաւարը հովին զիւաց թեփէն զատողներ, հոն ցորենը սանին մէջ լիցուցած, աւազանէն դուլերով վրան ջուր կրողներ, այր ու կին, երիտասարդ

ու ծեր կ'աշխատին, եւ և երբ մը, հապա հատիկ երկուսն ածնին շուրջը հատիկ յախշտակելու համար քսուըւտող լոճեքը, չորցած ձաւարը ջորիններով կրող բեռնակիրներ են. ևն, մանաւանդ երեկոյեան մօտ խուժը խուժը գրօնելու և դիտելու համար երկող տիկիններ և օրիորդներ՝ որոնք առուակին եզերքը մարգերու վրայ կը նստին ու ծանօթ ձաւար խաղողէ մը հրամցուած հատիկը կ'ուտեն:

Ամէն գիշեր Այնլէպէն հոգեւորութիւն կայ կը կարծես, 10—20 քնտանիքներ առանձին առանձին յամբարի մը չուրջ բուրուած են, ամէն մէկ խումբէն քնացածին եղանակներ, պոռչտուքներ, քրքիւններ. մինչև լոյս գրեթէ, մանաւանդ սքանչելի է լուսնկայ գիշերներ:

Ձաւարի պատրաստութիւնը տանտիկնոջ ամենակարեւոր ու ծանրիկել գործերէն մին է, կամ առտուն արեւածագէն առաջ կամ երեկոյեան մօտ բեռնակիրներ ցորենը ջորիններով կը կրեն Այնլէպէն, կը դիզեն աւաղանին մօտիկ, տանտիկինը իր ազգականներէն երիտասարդ օրիորդներն ու հարսերը կը հարսերը կը հրաւիրէ, որոնք ուրախութեամբ մը կը զիմեն. անմիջապէս տարէջ տիկին մը կը մօտէ ջուրին մէջ ուր նստապէս աւաղանին հոսանքին առաջ կարպետ մը փռած է՝ որուն վրայ աթուակով մը կը նստի ոտքերը ջուրին մէջ, ձեռքը քամոց մը (սղնձեայ ծակ ծակ աման մը սիւղեկ) զոր տիկինը կը սկսի ջուրին մէջ շարժել երկու ձեռքերով, երբ աղջիկներ, հարսեր ամաններով ցորենը կը թափեն անոր մէջ, (այս գործողութիւնը կ'ըսուի պուղճայը թաղլաւմ որ տան ցորենը կարպետին վրայ քարերը ամանին մէջ կը դիզուին) այս ատեն տեմնելու է երիտասարդուհիներու եռանդը, գլուխին ճերմակ շղարչներով ծածկուած, ոտքերնին բոպիկ, լեզակադոյն, սեւ կամ կարմիր ներկուած կոտուէ չիւթիւններ (տեսակ մը շալվար) հագած են զոր գործի ատեն հագնիլ սովոր են, աւելի ճապուկ ըլլալու համար. այդ շալվարները մինչև իրենց ծունկերը կը թրջուին ջուրին մէջ մտնելով (սրունքները ցոյց չտալու վախով է որ զանոնք վեր չէ քաշած երիտասարդուհին): Քիչ յետոյ ցորենը մաքրուած է և կարպետին վրայ դիզուած. մաքրուած ցորենը կը կրեն մեծ սանկրուն մէջ՝ որոնք 1 քիլէ (8 թիւին) կամ $1\frac{1}{4}$ քիլէ պարունակութիւնը կ'ունենան 10—15 դոյլ ջրով, որոնց տակը օճախներուն մէջ կը դիզեն փայտեր և կը վառեն, $1\frac{1}{2}$ —2 ժամէն հատիկը լաւ մը եփուած է. թօփերով ձերմակ կտաւները կը փռեն քովէ քով, զորս հասը 10—20 փարայի վարձքով առած են մասնաւոր տուողներէ, և կը սկսին հարսեւ օրիորդներ իրենց եղբայր կամ ամուսիններու օգնութեամբ կտաւներու վրայ հատիկը կրել՝ զորս նօսը նօսը կը փռեն. և անմիջապէս մնացած ցորենը կը լե-

ցընեն սանին մէջ ջուրով միասին: Հատիկը կտաներու վրայ փռուած ժամանակ զուարճալի կատակերգութիւն մըն է որ կը սկսի, խումբերով դատարկապորտ մանուկներ կը շրջապատեն հատիկը:

— Ապա՛ (տանտիկինը ակնարկելով) աճըդ վէր:

— Նէ՞ վար ապա նէ՞ վար:

— Երբորդ մըն ալ կ'աւելցնէ, պիր չիմտիք ապա՛ պիր չիմտիք:

Տիկինը կը շուարի թէ ո՛ր մէկուն տայ 15 20 լաճերուն. միոյն սաստած ժամանակ միւսը ափելով կը փախչի, հաղիւ թէ զայն հալածելու կ'ելնէ տիկինը, ուրիշ մը իր գլխուն իւղոտ ֆէսին մէջ լեցնելով կծիկը կը դնէ. տանտիկինը թող ուզածին չափ տեսնե՞նք սխալման օղոջ պոռաւ. այս չարածճիներ ճաւար խաղող տանտիկիններուն բաւական սիրտը կը խաղցնեն. Աստուած օգնէ մանաւանդ կծիկներուն:

Տանտիկինը լաւ եփուած հատիկէն որու կ'ըսեն թօփթօփու հատիկ, այսինքն սանին տակը եփուածէն, ա.մանի մը մէջ աւանդելով տուն կը տանի, որմէ մէկ մէկ պզտիկ պնակ կը բաղխէ իր գրացիներուն ու մօտիկ ազգականներուն, եթէ նշանուած աղայ մը կամ աղջիկ մը ունի, հարսնացոյին կամ փեսացոյին ընտանիքին զրկուելիք հատիկը բաւական աշխատանք ու ծախք կը պահանջէ, մեծկակ խանի մը (սինի) մէջ կը լեցնէ անուշահոտ համեմներով ու գունաւոր շաքարներով խառնուած հատիկը, որուն վրայ ծաղիկներ, խնձորներ, նուռեր, տանձեր չարած է վրանին հեղ (ոսկեն գոյն բարակ թուղթ) փակցուած տեղ տեղ. ճաւարին հետ միասին նուէր մըն ալ, հարսնացոյին վիզը անցընելու մանեակ մը կամ եթէ աղքատիկ է հագուստցու մը են, իսկ փեսացոյին մատանի մը, կամ տնական կահկարասի մը, օրինակ գորգ մը, սան մը, տապակ՝ մը որ ապագային պէտք պիտի ըլլայ նոր ընտանեկանւոյն հազմող ամուսններուն:

Տաք օրերուն առտուն փռուող հատիկը, իրիկուան չորցած է, պէտք է ծեծուի, այսինքն թեփը վրայէն սկրդի, որ թէ՛ համով ըլլայ և թէ՛ դիւրաւարս. այս գործողութիւնը այսինքն ճաւարի ծեծուիլը բաւական ուրախութեան ու խնջոյքի աւելի կ'ընծայէ իրենց. ճաւարին տէրը իր ազգական ու բարեկամ այրերուն նախապէս հրաւէր կուտայ որ տեսնեն հրաւիրէն. ուստի հրաւիրեալ էրիկ մարդիկ մէյմէկ ձեռուկ առած կուգան տեսնելու. գալով ճաւարի տիրոջ փեսացոյին՝ ձեռուկով մը և ծրար մըն ալ տարբեր պտուղով կուգայ տէլիւզ, այն ուրախութեամբ թէ այս առիթով իր նշանածն ալ պիտի կրնայ տեսնել. (որովհետեւ հոս նշանածն աղջիկներ կը փախչին իրենց նշանածներէն, սակայն վերջին մի քանի

տարիներուն մէջ բաւական թուով ընտանիքներ այս սովորութիւնը ձգած են, հիմա հասարակ դասակարգի մէջ մնացած է գրեթէ) էրիկ մարդիկ խոշոր քուրձերով ձաւարը կը կրեն տէյլիպ և վրան դոյլերով ջուր կը լեցնեն, տէյլիպէին ձին կը լծէ ու կը սկսի ձին դառնալ ու երկանաքարով ձաւարը ծեծել. այս գործողութիւնը բաւական ժամանակ կ'առնէ. այս առէն տանտիկինը օրիորդներուն ու հարսերուն հետ միասին, տէյլիպի աւանդական մասով, ձաւարով սմբուկէ տօլման կը պատրաստէ . 100—200 սմբուկը կը լեցնեն իրենց բազմութեան համեմատ. տօլման խոշոր սաներով եփելու կը դրուի. էրիկ մարդիկ մինչեւ ժամը 3—4 կ'աշխատին և վերջապէս ծեծուած թեփախառն ձաւարը կը կրեն կտաներու վրայ: Այլ եւս ձաւարը տիկիներու կը յանձնուի:

Այրեր բոլորակ մը կազմելով յապտերի մը շուրջը կը սկսին Բագոսի խնկարկութիւններուն, մէն մի բաժակին բարեմաղթութիւններ «ողջամբ կերէք» «տարօսը հարսնիքին» են., ասդին հարսեր օրիորդներ ձաւարը չարմաղներով իրենց դիտուն վրայ առնելով հովին ուղղութեան առաջ կը թափեն, որպէս զի թեփէն դատեն, եթէ հով ըլլայ ժամուան մը գործ է այս, կրկին թրջուած ու կակուղցած ձաւարը կը փռեն կտաներու վրայ. այս միջոցին հարսնացու օրիորդը հեռուէն մութին մէջէն գազտաքօղի կը դիտէ բոլորակին մէջ նստող նշանածը՝ որ օղիի աղբեցութեամբ ինքն ալ կը համարձակի հետզհետէ քովիներուն հետ խաղ կանչելու ծայնակցիլ. վերջապէս ժամը 5ին կամ 6ին ճաշը դրուելով կ'ուտեն և անվերջ բարեմաղթութիւններով կը մեկնին իրենց տուները: Հետեւեալ օրը մինչեւ ետինք ձաւարը լաւ մը չորցած է, բեռնակիրներ տուն կը կրեն. միւս օրը յատուկ մազո՞ղ այր մը գալով կը մազէ մանրիկները կը զատէ. տանտիկինը ալ գալիսններուն ու դրացուհիներուն հետ միասին մէկ երկու օր խաներու մէջ լեցնելով կ'ընտրէ մազուած ձաւարը. քարերն ու որոմները զատելով, 10—20 տիկիներ, օրիորդներ խնդալով խօսելով բաւական զուարճալի ժամանց մը կ'ունենան, երանի թէ քաւքասանիք մուտ չի գտնէր հո՞ն, սակայն կարե՞լի բան է: Այլ եւս կը մնայ ձաւարի մանրուիլը, ասոր համար յատուկ հուժկու մարդիկ կան որ չարժուն աղօթիք ունին՝ զոր բերելով մէջը մաս առ մաս ձաւար կը լեցնեն և թեւերը դէմ դիմաց երկու հոգի դարձնելով ձաւար կը մանրեն. մէկ հատիկը չորս հինգ կտոր կ'ըլլայ. մազողներ խոշոր ձաւար (պուլղուր) և մանր ձաւարը կը զատեն (սիմիտ), առաջինով տանտիկինը ապուր ու տօլիա կը շինէ, իսկ երկրորդով կը (քիւֆթէ), այլ եւս տանտիկինը խաչակնքելով ձաւարն ու սիմիտը փեթակներուն մէջ կը լեցնէ, չի մոռնալով անոր մէջը

նախապէս դնելու պէտքերը թաղը զոր Երուսաղէմէն եկողներէն նուէր ստացած է, չի մոռնար նաեւ մեծկակ ամանով մը ձաւար զրկել եկեղեցի Սւքատախնամին կամ Թաղին աղքատ մէկ ընտանիքին :

Ձաւարի գործն աւարտելէ յետոյ այգեկուծը վրայ կը հասնի. տանտիկինը արդէն օրեր առաջ ցորենը խոշոր սաներու մէջ՝ վրան ջուր լեցնելով 8—10 օրեր արեւուն դիմացը դրած է, ցորենը այսպէսով կ'ուռի ու կը կակուղնայ, կեղեւը պատռելու աստիճանին հասնելուն պէս, զայն քարէ կամ տախտակէ տաշտերու մէջ կոխկոտելով ճերմակ հիւթը սաներու մէջ կ'առնէ և զայն չորցնելով կը փոշիացնէ որ է նիշէ որ (քօլայի) ոսլայի հասարակն է, զոր տոպրակներու մէջ լեցնելով կը պատրաստէ: Նոյնպէս տանտիկինը պիտակ, նուշ, ընկոյզ կոտրելով անոնց միջուկները քիչ մը թրջած է և հաստկեկ բամպակեայ թելերու վրայ ասեղով շարած է. այս թելերուն երկայնքը գրեթէ կէս կանգուն է որուն վրայ 15—16 հատ պիտակ կամ նուշ անցուցած է և այս շարուած թելերէն 7—8 հատ՝ գաւազանիկի մը կապած է որոնք վար կը կախուին. ասոնք կ'ըսուին սուճազ աղանձը, ընտանիք մը 20—30 գաւազանիկներ սուճուգ կը պատրաստէ:

Այգեկուծի ժամանակ ամէն օր կէս գիշերուէնէ կը սկսին փողոցներու մէջ, այգի դացողներու ոտնաձայնը, ջորիներու բոժոյններու ձայնը, մարդիկ լեցուն այգիներու մէջ ու ճամբաներու վրայ: Առտուն կանուխ, այր ու կին, ծեր ու տղայ արեւմազէն առաջ ճամբու վրայ են, մանուկները ճերմակ գլխանոցներով՝ ջորիին վրայ երկու կողմը կապուած խաղող կրելիք մանրաներու կամ կողովներու մէջ նստած են. ամէնքն ալ առարկէն մինչեւ իրիկուն մեծ ու փոքրիկ կ'աշխատին այգիին մէջ, խաղող կը կտրեն ողկոյզներու մէջէն թուռած խաղողները կը զատեն և կ'ամբիւղներով մանրաներու մէջ լեցնելով՝ ջորիներով տուն կը կրեն: Հետեւեալ օրն իսկ աղգականներ տանտիկնոջ օգնութեան հասած են. ուռիներ (շիրի) պիտի շինուի. խաղողը լուսւով քարէ կամ տախտակէ տաշտերու մէջ լեցուցած են, որուն վրայ էրիկ մարդ մը ելնելով կը սկսի կոխկոտել, ձաւարի համար գործածուած խոշոր սանր խոշոր օճախի մը վրայ, բակին մէկ կողմը դրուած է՝ որուն մէջը կը լեցնեն տաշտէն վաղող խաղողի ջուրը, կը վառեն տակը, բոցեր կը լիզեն սանին չորս կողմը, ինչ ուրախութիւն, ինչ շէնութիւն, շիրի կ'ըլլայ, թո՛հ ու բո՛հ մը ամբողջ տանը մէջ, մանուկներու ճըլճաւութեամբ, օրիորդ ու տիկնիներու փութկոտ կանչերը «ջո՛ւր, քիչ մը ջուր, փայտ, չերեփ ևն» . նոյն շաշվարով նոյն տարազով կ'աշխատին ու կ'աշխատին:

Փորձառու տիկին մը, ձեռքը խոշոր շերեփը սանին գլուխը հրամաններ կ'արձակէ, հարսեր օրիորդներ մեծ ամաններու մէջ նիշէն կը շաղեն ու ջուրով լաւ մը հեղուկացնելէ յետոյ կը խառնեն սանին մէջ եռացող շերպիթին, միեւնոյն ատեն ուժեղ տիկին մը խոշոր փայտով սանը կը խառնէ, այս խառնուրդի ժամանակ՝ որ նիշէն խաղողի ջուրին հետ միանալով կը թանձրանայ, կատակարանութիւններ ու անվերջ քրքիչներ կը սկսին տեղալ, կարգ մը անուններ յիշելով որոնք իրարու հետ յարաբերւթիւն ունին, օրինակ, երկու նշանածներու, այր ու կնոջ, երկու սերտ բարեկամներու են. են. այսպէս կ'ըսեն «ուշտու, ուշտու» (յարմարեցաւ, միացաւ) Զարուհի կարագեալ, Սիրանոյշ թորոսա են., քիչ յետոյ քասքրիսը լաւ մը կ'եփի և կը թանձրանայ զոր, տանիքներու վրայ փռուած մաքուր ճերմակ կտաններու վրայ տախտակէ ծեփիչով մը (մաշա) բարակ մը ծեփելով կը փռեն, եւ զոր երկու օր յետոյ կտաւին հակառակ կողմը թրջելով տանտիկինը կը հանէ և թուղթի թերթերու նման կը կտրէ. նոյնպէս դաւաղանիկներու վրայէն կախուող սուճուղներն ալ կը թաթխեն մի քանի անգամներ, թանձրեկեկ եփուած բասթըլին մէջ, որով նուշին ու դերձանին վրայ եւս քասքրիս կը ծածկէ. սուճուղ թաթխուած ժամանակ տանտիկինը դուրսի դուռը կը դոցէ, (ըստ մամիկին հաւատքին) որ չար աչք մէկը չի դայ՝ որովհետեւ կրնայ ըլլալ որ սուճուղը ամբողջ կը փճանայ դերձաններուն վրայէն սկրզելով: Թարմ քասքրիսէն մէյմէկ սինակ լեցնելով դարձեալ իր գրաղիններուն ու աղգակներուն կը բաշխէ, այս բաշխումն ալ մանուկներու գործն է, որոնք բոլորիկ ոտքերով, չալվարներով կը վազեն փողոցներու մէջ ձեռքերնին պզտիկ սաթըլներու մէջ բասթըլ՝ զոր իրենց հօրաքրոջ, մօրաքրոջ են. ի կը տանին. հոս ալ դարձեալ մեծ ամանով մը վրան նուշ, ընկոյզ են. չարուած բասթըլս կը զրկուի հարսնոյն կամ փեսացուն նուէրով մը: Վերջապէս տանտիկինը իր ունեցած խաղողին համեմատ որ գանթարներով կ'ըլլայ, անուշեղէնի տեսակներ կը շինէ, 2—3 օրեր սանը անդադար կ'եռայ, տանտիկինը գիշերներ քուն չի քնանար, կ'աշխատի իրեններով՝ որոնք սանին բոցին դիմացը բոլորուած մինչեւ առաւօտ հէքեաթներ կը պատմեն եւ հեռոյճեալէ կ'եփեն, սուճուղ, պասքրիս, սիլմե, քաթխանա, փեմեկ են.:

Երբ տանտիկինը ձաւարը, ռուփինին, լօլիկի հիւթը (թոմաթէսի փէքմէղ) ուսմազի թթուն եփած է, ոմուկը փորած, բակլան, լուբիան խնձորը չորցուցած է, չամիչն ընտրած է եւն. եւն. որոնք ամբիսներ կը տեւեն. ամենէն վերջը բոլոր անկողիններու բարձերու բուրդերը կը գզէ, սուներ կը մաքրէ, կարպետ ու զոր

գերը կը փռէ եւ Յիսնակին Բարեկենդանի չարթուն հասապետական թոնիրը գնդուլ, իր ձեռնային պատրաստութիւններուն այլ եւս վերջալէսը կը գնէ եւ ալ կը սպասէ որ, ձիւնը գայ փաթիլ փաթիլ ու ինք զաւակները թոնիրին շուրջը հաւաքած սունուգ, պապրիկ տայ անոնց:

Այնքապ

ՕՐ. ՄԱՐԻԱՄ ԱՂԱՃԱՃԵԱՆ

Իր ճնշեսագէտի՞ հեղինակութեամբ ծանօթ մեր ազնիւ աշխատակցուհին՝ Օր. Բրիտսինե Մեղիսեան Խմբագրութեան խնդրանքին վրայ, «Սոսնանցի Դասեր»ու բաժին մը ստանձնած է, այս օրուրնէ իսկ, զոր պիտի շարունակէ հաճելի եւ դիւրօտոյց բացատրութեան եղանակով մը: Ինչուսի կ'ինքերուն եւ օրիորդներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք այս կարեւոր դասերուն վրայ:

ԱՌՏԵԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ

ԽՈՂԱՆՈՑԻ ԴԱՍԵՐ

Թէ՛ ինչպէս կ'եփուի հաւ մը եւ համեղ կարկանդակ մը

Կիրակի օր եղբորս հետ հրաւիրուած ըլլալով մոտերիմ բարեկամի մը տունը, տեսէ՛ք թէ հոն ի՞նչպէս սիրելի բարեկամուհիս շնորհակալութիւններուն արժանացայ... հաւու մը պատրաստութեան առթիւ:

— Երէկ մեր հաւերէն մէկուն ոտքը կոտրեցաւ, եւ երբ այս կարգի բան մը պատահի անմիջապէս կը մորթենք խեղճ կենդանին:

— Շատ աղէկ կ'ընէք, սիրելի՛ բարեկամուհիս, մանաւանդ որ երբ ձեր հաւը այլ եւս հաւնոցին վճարելիք պարտք մը չէ թողած...

— Այո՛, բաւական լաւ ամող մըն էր, եւ երբեք թուխս չէր նստեր: Յերեկուան ճաշի ստեղծ խաչած պիտի ուտէնք զայն, իսկ իր ջուրը իրկուան ապուրիս պիտի պահուի. ի՞նչ կ'ըսէ՛ք, աղէկ չէ՞:

Բայց քանի որ ինծի խորհուրդ կը հարցուէր, չէի կրնար պարզ կերպով մը ճամբել վրայէս, ուստի քիչ մը խորհելէ վերջ ըսի իրեն թէ՛ աւելի աղէկ կ'ըլլար զանազան թացաններով (սալցա) համեմել զայն: Այս խորհուրդս շատ հաճելի եղաւ իրեն եւ որո-

չեցինք որ հաւը պատրաստուի ասկաղոնիկի (տեսակ մը սխտոր, եշալօթ) թացանով :

Ասկաղոնիկի թացանը, ո՛հ, որքան կը սիրէ հայրս, ըսաւ ուրախութեամբ բարեկամուհիս և պատրաստութեան հրահանգները խնդրեց ինձմէ, որ ահա :

6 հոգիևոց սեղանի մը համար. Հասուն գէր հաւ մը, ո՛հ շատ ծեր ո՛չ ալ մատղաշ. — 250 կրամ վայրի խողի ճարպ. — $2\frac{1}{2}$ լիթր անուշ մաքուր ջուր. — Երեք ստեպղին միջին խոշորութեամբ. — Երկու բոլկ միջին խոշորութեամբ և ճիւղ մը կարոս (քէրէվիզ) :

Թացանը. — 9 — 10 աղէկ տեսակ ասկաղոնիկ (եշալօթ). — Քանի մը կաթիլ խիստ ընտիր ձէթ, պայմանաւ որ պտուղի հոտ չգայ մէջէն. — Երկու հաւկիթի թարմ դեղնուց. — Կէս լէմոն, ու թարմ պղպեղ կէս սուրճի դգալ և բարակ աղ կէս սուրճի դգալ :

Հաւից պատրաստութիւնը

Աղէկ մը մաքրեցէք և լուացէ՛ք բանջարեղէնները. — Խողաճարպը լուացէք գաղջ ջուրով : Հողէ ընդարձակ պտուկ մը առէք ոչ այնչափ խոշորկէկ, որպէս զի շատ ջուր չառնէ : Եւ սակայն պէտք է որ հաւը աղէկ մը ծածկուի ջուրով, գրեթէ $2\frac{1}{2}$ քիլօի չափ : Այս պտուկին մէջ նետեցէք հաւը, խողաճարպը և արծարծուն կրակի մը վրայ դրէք զայն և թողէք որ եռայ. — Ղգուշացէք աղ զնիւէ, որովհետեւ խողաճարպը արդէն աղի է : — Յետոյ բանջարեղէնները մէջը նետեցէք և շերելով մը փրփուրները միշտ առէք երեսէն :

Յետոյ կրակը քիչ մը թեթեւցուցէք և թող եփի կանոնաւոր եռուղեռով մը : Մեծ հոգ տարէք պտուկը աղէկ գոցելու և քիչ մը ծակ թողուցէք որ չոգին դուրս ելլէ, որպէս զի խաչածոն դուրս չպոռթկայ. — Այսպէս երկու ժամ եփելու է : Եւ երբ ճաշի ատենը կը մօտենայ թացանը (սալցա) պատրաստեցէ՛ք :

Ասկաղոնիկի քացանը. — Ստեղծեք ասկաղոնիկները տրուած չափով. մի վախնաք թէ աւելի են անոնք : Սանդին մէջը ասկաղոնիկը աղով ծեծեցէք աղէկ մը մինչեւ որ մածունի պէս ըլլայ : Յետոյ իրարու ետեւէ հաւկիթին դեղնոցները լեցուցէք վրան, միշտ սանդին մէջ գարձնելով այս խառնուրդը : Հիմայ, սանդին մէջը լեցուցէք կաթիլ կաթիլ ձէթը և մայեօնէզի մը պէս խառնեցէք, մինչեւ որ բաւական մը թանձրանայ. այն ատեն պայծառ

դեղին գոյն մը կ'առնէ. որուն մէջը կը նետէք քիչ քիչ պղպեղը, միշտ դարձնելով խառնուրդը, յետոյ կաթիլ կաթիլ լէմոնի հիւթը, քանի մը անգամ եւս կը դարձնէք և ահա թացանը պատրաստ է:

Սպասարկութիւնը

Պնակը որուն մէջը պիտի գրուի հաւը քիչ մը տաքցուցէք. — Յետոյ հաւը պտուղէն հանելով, չոր չոր պնակի մէջ պառկեցուցէ՛ք, սեղանին վրայ պիտի կտրուի. — Հաւին եղերբը դրէք խողաճարպը կտոր կտոր ըրած: Թացանն ալ թացա՛մանի մը մէջ կը լեցունէք և հաւին հետ կ'ուտէք: Հարկ չկայ բնաւ պնակները տաքցնելու:

Դիտողութիւն. — Հաւուն ջուրը պէտք չէ յուճկէտս վառնել. աղուոր ապուր մը կը պատրաստուի անկէ, իւղերը քիչ մը թեւ թեւցնելով:

Հիւայ անցնինք բսելու թէ ի'նչպէս կը պատրաստուի համեղ կարկանդակ մը, որ միեւնոյն ատեն շատ դիւրին և խնայողական ալ է:

Համեղ կարկանդակ մը

Ունեցէ՛ք 350 կրամ բարակ աղէկ ալիւր. — 250 կրամ կարագ. — 250 կրամ փոշի շաքար. — 6 թարմ հաւկիթ. — 11 դգալ (ապուրի) կաթ. — քիչ մը վանիլլի փոշի. — կէս լիւննի մը հիւթը զտուած. — 20 կրամ իրեւն ջը քարթըրը և 10 կրամ պիստպօնաք ջը առէ և անուշեղէնի կլոր ափսէ մը:

Պատրաստութեան եղանակը

Կարագը կը ծեծէք, յետոյ քիչ քիչ շաքարին փոշին և հաւկիթին դեղնուցները վրան կ'աւելցնէք. — յետոյ, մաղուելէ վերջ ալիւրնիդ վրան կը լեցունէք այս խառնուրդին քիչ քիչ պաղ կաթ ալ աւելցնելով: Երբոր միայն քանի մը դգալ ալիւր մնայ, իրեւն ջը քարթըրով և պիստպօնաքով կը խառնէք և կը մաղէք նոսրէն:

Հաւկիթին ճերմկուցները ծեծեցէք մինչեւ որ ձիւնի պէս բլլան ևս զմանք նախապէս չիմուած խառնուրդին վրան աւելցուցէ՛ք, ապա պիստպօնաքի բաղադրութիւնը աւելցուցէք և ծանր ծանր շարժուցէք այս ամէնը:

Ափսէն կարագով իւղոսեցէք և իւղին վրան քիչ մը ալիւրի

փոշի ցանեցէք, սպա խմորը մէջը լեցուցէք: Նախընտրելի է որ անմիջապէս եփուի այս կարկանդակը, որպէս զի ուռնայ: Փուռին տաքութիւնը պէտք է չափաւոր ըլլայ, նախապէս 150 աստիճան և երթալով աւելի քիչ 110 կամ 105 աստիճան: Այս կարկանդակը $1\frac{1}{4}$ ժամէն մինչեւ մէկուկէս ժամ կրնաք թողուլ փուռին մէջ, ուրիշ վերջ կը տարածէք մաքուր թուղթի մը վրայ եւ կը կտրէք. ապա վրան չաքարի բարակ փոշի կը մաղէք մետաքսէ կերպասով մը:

ԳՐԻՍՏԻՆԷ ՄԵԼԻՔԵԱՆ

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՉՔԵՐԸ

Աչքերը. — Աչքերը չա'տ անգաղտնապահ են իրենց ծաւալին, գոյնին և արտայայտութեան համեմատ, ու երեւան կը հանեն մարդկային էակին նկարագիրը: Ընդհանուր առմամբ մութ աչքերը պայծառ աչքերէն աւելի արտայայտիչ են: Հոգիին ներքին յուզումները կը փայլին անոնց մէջ, և իրենց կարգին ամէն զգացում կը յայտնուի անոնցմով: Այն աչքերը որ բան մը չեն խօսիր, հոգի չունին: Անոնք կը դատակարգուին սապէս. սեւ աչք, կապոյտ աչք, մոխրագոյն աչք և կանաչ աչք: Այս անասններուն իւրաքանչիւրին կը համապատասխանեն զանոնք կրողներուն թերութիւններն ու յատկութիւնները:

Մի' դարձանաք սակայն, երբ ըսեմ թէ ճշմարտապէս սեւ աչք չկայ: Ամէնէն մութ աչքերը անո'նք են որոնց մէջ բիւր արտասովոր կերպով ծաւալ գտած է:

Գոյները զգացումներուն տեսակը ցոյց կուտան. — Շատ մութ աչքերը կը յայտնեն առոյգ զգացումներ, զօրաւոր կիրքեր, եռանդ, բարկութիւն, արիւթիւն, հաճոյքի մոլութիւն: Խարտեաչ աչքերը գրեթէ յիւսնոյնը կը յայտնեն, բայց զգացումները եւ կիրքերը հոս աւելի քաղցր են, եռանդը աւելի մեղմ, և կամեցածութիւնը աւելի յստակ ու սրու: Պայծառ աչքերը ընդհանրապէս քաղցր և համակրելի զգացումներ կ'արտայայտեն: Կապոյտ աչքերը պարզասիրտութիւն, քաղցրութիւն: Եթէ կապոյտը չա'տ բաց է, այն ատեն ակարծութիւն կ'արտայայտեն և միտքը աւելի անորոշ: Մոխրագոյն աչքերը սիրտն բաւեր կը խօսին մեղի: Անոնք կը յայտնեն թէ զիրենք ունեցող անհատը հեղհամբոյր և կոկիկ մէկն

է: Ընդհանրապէս գիտունները և փիլիսոփաները կ'ունենան: Կանաչ աչքերը խորամանկութիւն և չարութիւն կը յայտնեն:

Դիտեցե՛ք այ՛ներ. — Եթէ պզտիկ են անոնք ու առոյգ, ըսել է որ խելացի մարդու մըն են անոնք: Եթէ նայուածքը մարած է, միտքն ալ դանդաղ է ուրեմն: Անուշ նայուածք ունեցողը բարի է:

Բայց աչքերը կրնան սուկ: Անոնց լեզուն պէտք ունի լուսաբանուելու և վաւերացուելու, որովհետեւ անոնք շատ անգամ հակասութեան մէջ կը գտնուին ա՛յն պատողութիւններուն հետ զոր բերանը կ'արձակէ. «Խօսէ՛ որ հասկնամ քեզ» կ'ըսէ առածը:

Մտիկ ընենք ինչ որ պիտի ըսեն մեր խօսակիցներուն աչքերը, բաղդատենք անոնց արտայայտիչ լեզուն՝ խօսքերուն հետ եւ այն ատեն ահա մեր դատողութիւնը ուղիղ պիտի ըլլայ:

ԱՏՐԻՆԷ ՄԻՍԱԿԵԱՆ

ԲԵՐԱՅԻ ԱՂՔԱՏԱԽՆԱՄԸ

Աղքատախնամս կը փութայ ներկայիւս ծանուցանել թէ՛ Հիւանդապահուիչներու պատրաստութեան համար դարմանատանս մէջ հաստատուած դասընթացքի 5րդ շրջանը, յառաջիկայ Նոյեմբեր 15ին պիտի սկսի: Բոլոր Տիկնայք և Օրիորդք որ կը փափաքին հետեւիլ նոր շրջանին, կը հրաւիրուին Աղքատախնամիս զրաւենեակը ուր իրենց անունը կրնան արձանագրել տալ, ամէն օր առաւօտէն սկսեալ մինչեւ կէս օր, բաց ի Կիւրակիէ:

Մնամք Յարգանք

Ի Դիմաց Աղքատախնամի

Ասեմալպի

Բ. Ասեմալպէ

Զ. ԴԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ

ՏԺԹ. Տ. ՔԱՅԱՄԱՃԵԱՆ

Դ Ր Պ Ա Ն Ի
ԲԱՌԱՐԱՆ

Ա Ն Դ Լ Ե Ր Է Ն Է Հ Ա Յ Ե Ր Է Ն
Դին Ց զրուշ
Կեդրոնատեղին է Սագահան Տպարան

Ք Ր Ո Ն Ի Կ

Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ. — Ուրախութեամբ կը ծանուցանենք ծաղիկի ընթերցողներուն և ընթերցութիւններուն թէ ծանօթ գրադէտ, Արմաշական Տ. Մուշեղ վարդապետ որ համակիրներու ստուար թիւ մը ունի իրեն, եպիսկոպոս ձեռնադրուած է նախընթաց Կիրակի օր, Սոյ Մայր եկեղեցիին մէջ, Կիլիկիոյ Ա.Մեն. Տ. Տ. Սահակ Ս. Կաթողիկոսէն: Երիտասարդ Արմաշականը նկարագրով, մտքով և գրչով անուանի եկեղեցական մըն է, որ հազիւ քսանամեայ Առաջնորդ Ատանայի, եպիսկոպոսութեան կը յարձրանայ իր ունեցած անձկատելի արժանիքներուն շնորհիւ: Յոգնախնու թաղմութիւն մը ներկայ գտնուած է այս ձեռնադրութեան, և հանգիստաւոր բարեմաղթութիւններ եղած են այս առթիւ Վն: Սուլթանին թանկագին կենաց և արեւշատութեան համար:

ՏՕՔԹ. ԹՈՐԳՈՄԵԱՆ. — Ֆրանսական կառավարութիւնը «Օ. Ֆիսիէ տ'Աքատէմի» ատտիճանը տուած է Տօքթ. Վահրամէ ֆ. Թորգոմեանի, որ Բարիլի մէջ, Ֆրանսական լեզուով դիտական-բժշկական կարեւոր երկարամիտութիւններ հրատարակած է, օգտակար ծառայութիւն մը մատուցանելով ընդհանուր բժշկութեան: Գոհութեամբ կ'արձանագրենք Պօլսահայ ականաւոր բժիշկներէն մէկուն եղած այս պատիւը, որ չափ քիչերու միայն վերապահուած է:

ՎԵՅ ՀԻԻԱՆԴՈՊԱՀՈՒՀԻՆԵՐ. — Բերայի Աղքատախնամի դարմանատան մէջ Կիրակի օր տեղի ունեցաւ հիւանդադսնութեան դասընթացի հետեւած վեց օրիորդներու քննութիւնը և վկայականաց բաշխումը, ի ներկայութեան Աղքատախնամի կնամական-լուսիններուն և տատցիչ բժիշկներուն:

ԳԱՐՈՒՆ ԳՐԱՏՈՒՆ. — Ստացանք Պօլսա Մեծ Նոր Խան, վերի յարկը հօտատուած Գորուն Գրատան հրատարակութիւնը եղող Գաբամասեանի Հաւաքածոյն, որ ընթերցանութեան արժանի զիրք մըն է գաղացականներու համար:

ՆՈՒԱԳՈՀԱՆԴԻՍ. Կը լսենք թէ ջութակի ծանօթ ուսուցիչ Մ. Իգ. Կօլաշնպէրկ, որուն թեւթմիայի մէջ սարքած նուագահանգէսները յովողութեամբ կը պսակուին, այժմէն պատրաստութիւններ կը տեսնէ իր տարեկան նուագահանգէսին համար, որուն երբ կատարուիլը պիտի ծանուցանենք մեր ընթերցողներուն:

ՏԻԿԻՆ ՋԱՊԵԼ

ՎԵՐԱԴԱՐՁԱԾ

Ձեւ ու կարի մէջ իր ունեցած հալաւով ծանօթ Տիկին ՋԱՊԵԼ, որ վերջերս Եւրոպա գացած էր նոյն ճիւղին մէջ իր ունեցած զարգացումը կատարելագործելու համար, Académie de Coupeի փայլուն մէկ վկայականով մայրաքաղաքս հասած է եւ երկու չարաթէ ի վեր հաստատուած է Բերա, Մեծ փողոց, Սանթա Մարիա եկեղեցիին դէմ թիւ 418 արարթըմանը, ուր մեծ արհեստանոց մը հիմնելով սկսած է յանձնարարութիւններ ընդունիլ արդէն իսկ, բազմաթիւ հարուստ յնտանիքներէ: Իր հետ բերած է նաեւ Եւրոպայէն ամառնային կերպասեղինաց ճօխ մթերք մը զոր իր յաճախորդուհիներուն տրամադրութեան ներքեւ դրած է:

9 - 13

Զ. Տ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆԻ ԵՐԿՈՒ ԿԱՐԵՒՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գործնական բառարան

Հայերէն-Անգլիերէն

Ե Ի

Չորեքէզուեան խօսակցութիւն

Հայ. Գաղ. Անգղ. Էւ Գերմ.

Գործ. բառարան.— Գործնական բառարանը որ կը բաղկանայ 507 էջերէ, կը պարունակէ 40000է աւելի բառեր, ոճեր, ասութիւններ, ևլն. հայերէնէ անգլերէն, եւ պատրաստուած է մեծ խընամով ու գլխաւոր հետեւողութեամբ Websterի հոլակապ բառագիրքին: Անհրաժեշտ ամէն անոնց որոնք պէտք ունին ճշմարտապէս գործնական բառարանի մը:

Դին լաթակազմ 35 դահեկան

Չորեքէզուեան խօսակցութիւն.— Այս հատորն ալ, որուն մասին խօսած էինք արդէն Մաղիկի մէջ, կը բաղկանայ 320 էջերէ, եւ կը պարունակէ երեք մասեր.

Ա. Մաս.— Բառագիտութիւն,

Բ. Մաս.— Խօսակցութիւններ, այցելութեան, զնման, վաճառման, ճամբորդութեան, եւն. եւնի վերաբերեալ:

Գ. Մաս.— Տոմսեր, նամակներ, հրաւիրագրեր եւ վաճառականական թղթակցութիւններ:

Այս հատորին շնորհիւ, որ ամէն մարդու հաւասարապէս կրնայ օգտակար ըլլալ, կարելի է խիստ կարճ ժամանակի մէջ սահուն կերպով խօսիլ վերոյիշեալ լեզուները:

Դին լաթակազմ 12 դահեկան

Երկու հատորներն ալ առանձինն առանձինն կը ծախուին բոլոր գրավաճառաց քով: Կեդրոնատեղին է Պալենց գրատուն:

Վարժարանաց համար մասնաւոր զեղչ

6—10

(457)

Նոյն համար: Գրական այս գեղեցիկ հատորը կը գտնուի ամէն գրատուննեւ:
Բոլորն մէջ եւ զինն է 4 զոռչ:

ԷՏԵՎԱԹԸ ԻՆՇԱՅԻԷ ՄԱՂԱԶԱՍԸ
ՀԱՃԻ ՊԱՂՏԱՍԱՐ ՏԵՅԻՐՄԷՆՃԻԱՆ ԿԷ ՄԱՆՏՈՒՄԸՆԲԸ

[illegible]

մէքտէ օլտուղւոյնդր տախի ալլընճա իլամ իմէրիդ:
Թաշրա սրփաբըչաթը տախի քէմալը ինթիմաւ վէ սիւրաթ
իճրա խտիլիւր: 8—50